ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2018թ. հոկտեմբերի 24 N 130

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՇՏԱՐԱԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>, <<ԱՊԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>, <<ԹԱԼԻՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ <<ԱՐՏԵՆԻԻ ԹԻՎ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>, <<ԱՐՏԵՆԻԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները՝ ***կարգադրում եմ***՝

1.Անհրաժեշտությունից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակի բժշկական կենտրոն>>, <<Ապարանի բժշկական կենտրոն>>, <<Թալինի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություններում և <<Արտենիի թիվ 1 միջնակարգ դպրոց>>, <<Արտենիի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել ներքին աուդիտ՝ ներառելով 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2018 թվականի նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածը ներքին աուդիտի բաժնի պետ Սարգիս Մուրադյանի, բաժնի գլխավոր մասնագետ Ենոք Մինասյանի և առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ Մերի Շահազիզյանի, կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ Ստալ Սարդարյանի, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր

մասնագետ Կարապետ Ժամհարյանի կողմից, աշխատանքներին մասնակից դարձնելով վերոհիշյալ կազմակերպությունների տնօրեններին և հաշվապահներին:

2. Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 15 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2018 թվականի նոյեմբերի 15-ից ավարտել դեկտեմբերի 5 -ին:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 10/26/2018 09:59:41 GMT+4

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ